

## Հ Ր Ա Մ Ա Ն N 313-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

«03» ՀՈՒԼԻՍԻ 2018 Թ.

ՔԱՂ. ԵՐԵՎԱՆ

«ԵՐԵՎԱՆ» ՆՈՏԱՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՆՈՏԱՐ ԿԱՐԻՆԵ ԱԴԱՄՅԱՆԻ  
ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «ԵՐԵՎԱՆ» ՆՈՏԱՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ  
ՆՈՏԱՐ ՍՈՒՍԱՆՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասով և 22-րդ հոդվածի 4-րդ մասով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության նոտարական պալատի նախագահ Վ. Հովսեփյանի 2018 թվականի հունիսի 30-ի N ԵՆՊ-397/18 գրությունը և «Երևան» նոտարական տարածքի նոտար Կ. Ադամյանի դիմումը.

### Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. 2018 թվականի հուլիսի 25-ից մինչև օգոստոսի 7-ը ներառյալ «Երևան» նոտարական տարածքի, նստավայր՝ «Արաբկիր 4» նոտար Կարինե Ադամյանի ժամանակավոր բացակայության ընթացքում նրա կողմից «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 58-63-րդ հոդվածներով նախատեսված նոտարական գործողություններ կատարելու, ինչպես նաև վավերացված գործարքներում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու կամ դրանք վաղակետ լուծելու լիազորությունները վերապահել «Երևան» նոտարական տարածքի, նստավայր՝ «Արաբկիր 4» նոտար Սուսաննա Դանիելյանին:

ԱՐՏԱԿ ԶԵՅՆԱԼՅԱՆ

 Invalid signature

X 

Artak Zeynalyan